

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 43/4

23 հոկտեմբերի 2012թ.

Քննարկվեց «Արմենիան Հոսփոխյալիթի Հոլդինգ» ՍՊԸ 12.10.2012թ-ի դիմում-բողոքը « ԿԱ ՊԵԿ ՕՇՎ 29.09.2012թ. թիվ 1104239 ստուգման ակտի դեմ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 31.08.2012թ. թիվ 1104239 հանձնարարագրի, « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում « օրենքների և այլ իրավական ակտերի առանձին պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով «Արմենիան Հոսփոխյալիթի Հոլդինգ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում, որն ընդգրկել է 25.08.2011թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 29.09.2012թ-ին կազմվել է թիվ 1104239 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 1.355.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընկերությունը սույն թվականի հուլիսի 1-ից մինչև 14.09.2012թ-ը զբաղվել է հանրային սննդի կազմակերպմամբ (խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպում) 130 ք.մ. սպասարկման մակերեսի միջոցով, որի համար նախապես Սևանի ՏՀՏ չի ներկայացրել հայտարարություն արտոնագրային վճար վճարող համարվելու մասին և չի վճարել արտոնագրային վճար:

Խախտվել է «Արտոնագրային վճարների մասին» « օրենքի «Հավելված 8»-ի 1-ին, 5-րդ և 7-րդ կետերի պահանջները, որի արդյունքում նույն օրենքի «Հավելված 8»-ի 9-րդ, 10-րդ կետերի և 13-րդ կետի 1-ին մասի համաձայն, հուլիս ամսից մինչև սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում հաշվարկվել է ընդամենը 517500 դրամի արտոնագրային վճար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Արտոնագրային վճարների մասին» « օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով արտոնագրային վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 1.035.000 դրամ:

«Արմենիան Հոսփոխյալիթի Հոլդինգ» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Ընկերությունը համաձայն չէ ստուգման ակտով արձանագրված խախտման հետ հետևյալ պատճառաբանությամբ:

Ընկերությունը զբաղվում է հյուրանոցային ծառայությունների մատուցմամբ, որը համապատասխանում է զբոսաշրջության բնագավառում « Կառավարության լիազորած մարմնի՝ « Էկոնոմիկայի նախարարի 2012թ. մարտի 23-ի թիվ 268-Ն հրամանով սահմանված չափանիշներին: Այդ հրամանով սահմանվել է, որ լիազոր մարմնի սահմանած չափանիշներին համապատասխանող են համարվում «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» « օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված հյուրանոցային տնտեսության օբյեկտները: Այդ հրամանի վերաբերյալ « Էկոնոմիկայի նախարարի 2012թ. հունիսի 20-ի թիվ 3 պաշտոնական պարզաբանմամբ նշվել է, որ եթե օբյեկտը համապատասխանում է այդ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված սահմանումներից որևէ մեկին և տնտեսվարող սուբյեկտի կողմից շահագործվում է որպես այդպիսին, ապա համաձայն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետի, այն

համարվում է չափանիշներին համապատասխանող: Վերը նշվածից ելնելով և հիմք ընդունելով «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի հավելված 7-ի 2-րդ կետի 2-րդ ենթակետը և հավելված 8-ի 4-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մատուցվող հյուրանոցային ծառայությունների և հանրային սննդի կազմակերպման մասով ընկերության կողմից հարկերը հաշվարկվել են հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

Անհասկանալի է, թե ինչ տրամաբանությամբ կամ որ օրենքի դրույթներով են առաջնորդվել ստուգում իրականացնող օպերիվազորները, եթե «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետում հստակ նշված է, որ արտոնագրային վճարի օբյեկտ չեն համարվում զբոսաշրջության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի սահմանած չափանիշներին համապատասխանող հյուրանոցային տնտեսության օբյեկտներում Օրենքի թիվ 7 հավելվածի 1-ին կետի 1-ին, 4-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված գործունեության տեսակները:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է դիմում-բողոքում նշված հանգամանքները սահմանված կարգով քննարկել և ստուգման ակտն օրենքի անհամապատասխանության հիմքով համարել անվավեր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով «Արմենիան Հոսփիթալիթի Հոլդինգ» ՍՊԸ ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ դիմում-բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի N 8-րդ հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն. «Արտոնագրային վճարի օբյեկտ չեն համարվում զբոսաշրջության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի սահմանած չափանիշներին համապատասխանող հյուրանոցային տնտեսության օբյեկտներում Օրենքի N 7 հավելվածի 1-ին կետի 1-ին, 4-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված գործունեության տեսակները.»:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի N 7 հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն. «Արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակներն են՝

1) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը.»:

ՀՀ կառավարության լիազորած մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2012թ. մարտի 23-ի թիվ 268-Ն հրամանի 1-ին կետով սահմանվել է, որ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 7 հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի և N 8 հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի իմաստով զբոսաշրջության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի սահմանած չափանիշներին համապատասխանող են համարվում.

1) «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված հյուրանոցային տնտեսության օբյեկտները, բացառությամբ այն հյուրանոցատիպ հանգրվանների, որտեղ մատուցվող տեղաբաշխման ծառայությունները չեն ներառում առնվազն մեկ գիշերակաց կամ չի վարվում հաճախորդի կամ հաճախորդի համար ամրագրում կատարող անձի վերաբերյալ տվյալների պատշաճ տեղեկատվության (ֆիզիկական անձանց համար՝ անձնագրային, իրավաբանական անձանց համար պետական

գրանցման տվյալներ, ինչպես նաև հյուրանոցային համարի ամրագրման և զբաղեցման ժամկետների վերաբերյալ) ստացման և պահպանման գործավարություն>:

<Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Հյուրանոցները հյուրանոցային տնտեսության այն օբյեկտներն են, որտեղ մատուցվում են հյուրանոցային ծառայություններ մեկ կամ մի քանի շինություններում, որոնք ունեն առնվազն 10 սենյակ, որոնցից առնվազն 5-ը՝ մեկ կամ երկտեղանոց համարներով>:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ <Արմենիան Հոսփիթալիթի Հոլդինգ> ՍՊԸ բավարարում է <Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով հյուրանոցային տնտեսության օբյեկտներին ներկայացվող պահանջներին, հետևապես ընկերության կողմից հանրային սննդի ոլորտում իրականացված գործունեությունն արտոնագրային վճարի օբյեկտ չի համարվում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 29.09.2012թ. թիվ 1104239 ստուգման ակտի 1-ին կետը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ